

Հ Ա Ն Դ Է Ս Բ Ա Ն Ա Ս Ի Բ Ա Կ Ա Ն

Գ Ր Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն

Լուսիադք՝ Գամօհենի, Տեղեւաք՝
Ֆենկերուհի, Հւանրիադք՝ Վոյրքուհի, Կու-
րուստ դրախտիւն՝ Միլիդրուհի :

Ինչպէս իտալացիք կը պարծին թաւ-
սոյի քերթութեամբ, այսպէս նաև բոր-
գոկացիք Գամօհենիւ, որ գրեթէ ա-
նոր ժամանակակից էր, սակայն իւր
քերթութեամբն երուսաղեմի Ազատութե-
նէն առաջ հրատարակուեցաւ : Այս
քերթութեանն նիւթն է վասգոյ Գա-
մայի առաջին անգամ Բարեկուսոյ զլխէն
Հնդկաստան անցնիլն, որ ստուգիւ
չքեզ ձեռնարկ մ'է և շատ օգտակար ե-
ղաւ Գամօհենի քաղաքակցաց . վասն զի
իրենց պազգայ զօրութեան և մեծա-
նունութեան սկիզբը նա մտուց Եւրո-
պայի մէջ : Քերթութիւնն կը սկսի Վաս-
գոյի և իր բանակին երևնալովն, որ ՚ի
հարաւային Ովկիանոսն՝ ընդ մէջ Մա-
տակասկար կղզւոյն և արփանցն էթով-
պիոյ : Յետ այլ և այլ անգամ փորձելու
մերձենալ այն արփանց, հուսկ ուրեմն
Բորգոկացիք սիրով ընդունուեցան Մե-
լիսդայի տէրութեան մէջ : Վասգոյ թաւ-
սուորին խնդրանք՝ անոր՝ Եւրոպայի
նըհանուր նկարագիր մը կ'ընէ, Բոր-
գոկայի քերթողական վէպ մը կը պատ-
մէ, և բոլոր ճանապարհորդութեան մէջ
հանդիպած դէպքերը՝ զորս արդէն քեր-
թութեան սկիզբը կանխած ըսած է՝ հոն
յառաջ կը բերէ :

Այս պատմութիւնն երեք գրուագաց
մէջ բովանդակուած է : Շատ լաւ նկա-
րագրուած է և լի բանաստեղծական
զանազան դեղեցկութեամբք . շունի այլ
խեբրութիւն, բայց այս միայն որ վաս-
գոյ անսպառ և հոգնեցուցիչ յաճախու-

թեամբ՝ խիտ առ խիտ յունական և կամ
հոովմէական պատմութեանց վերաբե-
րեալ այլաբանութեամբք՝ արբիկեցի իչ-
խանին առջև կը խօսի : Վասգոյ և իւր ըն-
կերակիցքն կը շարունակեն իրենց ճա-
նապարհը՝ մրկալից օդերն և ձախորդու-
թիւնք՝ որք իրենց հանդիպեցան, հաս-
նիլն ՚ի Գալիկուդ՝ Մալաբայի արփանց
վրայ, իրենց մարգասիրաբար ընդու-
նուիլն և այն երկրին մէջ գտած յալո-
ղութիւնքն, և վերջապէս իրենց ՚ի հայ-
րենիս վերադարձն՝ կը կազմեն քեր-
թութեանն մնացեալ մասերը :

Բովանդակ քերթութեանն յօրինուած է
ըստ դիւցազնական քերթութեանն օրի-
նաց . յորում թէ նիւթն և թէ հանգա-
մանքն հաւասարապէս դրանչելի են . թէ-
պէտ և քիչ մը անյարգութիւն և ան-
կանոնութիւնք ալ կը գտնուին, բայց
ամբողջութեանը մէջ կը տեսնուի ա-
ռատ բանաստեղծական ոգի, աշխոյժ
երևակայութիւն և նկարագրելու ար-
ձակ ոճ մը, որչափ ինձ զայն դատելն
կարելի է՝ ցտար լեզուի թարգմանու-
թիւններէն, անտեղեակ ըլլալով հեղի-
նակին լեզուին : Բարուց ճշգրիտ նկարա-
գրութիւն ընելու մասնաւոր փոյթ չի
տեսնուիր, զիւցազնն է վասգոյ և միակ
անձն, որ բովանդակ քերթութեան
ոգին կը կազմէ :

Լուսիադքի երևակայած յօրինուածն
ստուգիւ խիտ անսովոր բան մ'է . վա-
սըն զի ոչ միայն քրիստոնեայ դաղա-
փարաց և հեթանոս դիցաբանութեան
եղական խառնուած է մը կազմեալ է, և
այլ այնպիսի ոճով գրուած են որ զուցէ
հեթանոս աստուածքն ճշմարիտ Աս-
տուած կ'երևին . իսկ Քրիստոս և Սուրբ

կոյնս ստորակարգեալ գործողք: Բոր-
դոկալցոց արչաւանաց զլխաւոր պատ-
ճառաց մին ևս՝ ըստ հեղինակին, քրիս-
տոսական կրօնից տարածումն էր ու
այլագենից ջնջումն: Արդ, այս կրօնա-
նական գործոյն մէջ Բորդոկալցոց մեծ
պաշտպանն Աստղիկն է և ամենամեծ
խնամին Բագոսն. որ և դժկամակե-
ցաւ սա թէ վասգոյ Հնդկաստանի մէջ
ջանաց հետամուտ ըլլալ իւր փառացը:
Խորհուրդ կը յօրինի աստուածոց՝ յու-
րում Արամազդ կը գուշակէ այլագե-
նութեան անկումն և քրիստոնէու-
թեան տարածումն: Վասգոյ միրկսոյից
մեծ վտանգի մը մէջ առ Աստուած կը դի-
մէ, Քրիստոսի ու Մարեմայ օգնութիւնն
կը հայցէ, և այն օգնութիւնն կը պաղա-
տիրոր տուաւ իսրայելացոց մինչ կարմիր
ծովէն կ'անցնէին, և Պետրոս առաքե-
լոյն՝ մինչ նաւաբեկելու վտանգի մէջ էր.
այս աղօթից զօրութեամբ կ'երևի Աստ-
ղիկն և յառաջատեսութեամբ կ'իմանայ
թէ այս միրկս Բագոսի գործն է. կը
տրտնջէ առ Արամազդ և կը ջանայ խա-
ղաղել հողմերն: Այսպիսի անսովոր յու-
րինուած մը՝ կը ցուցնէ թէ սրչափ խա-
բուեր է քերթողն իւր թերի կարծեք՝
իրը թէ առանց Հոմերի աստուածներն
մէջ բերելու՝ դիւցազններգական քեր-
թութիւնն չի յօրինուիր: Ստոյգ է թէ
հեղինակն իւր գրուածին վերջը պատ-
րասկիլ դարման մը կ'ընէ իրեն դի-
ցաբանութեան. յորում՝ Թեոփս աս-
տուածուհին կ'իմացընէ Վասգոյի՝ թէ
ինքն և միւս հեթանոս աստուածներն
միայն անուամբն և ոչ իրականութիւն.
որք կը խնամեն աստուածային տեսչու-
թեան զանազան գործողութիւններն.
Բայց այս դարմանս ուշ և 'ի զուր է

Սակայն այլասեռ յօրինուած մի ևս
կը նշմարուի Լուսիադքի մէջ, որ խիստ
գեղեցիկ է: Գանդէս գետոյն Ողին՝ որ
տեսլեան մէջ կ'երևի Բորդոկալի Մա-
նուէլ թագաւորին, և կը կոչէ զինքը՝
իւր աղբերականց զապանիքը յայտնե-
լու, և կ'իմացընէ միանգամայն իրեն՝
թէ ինքն է միահեծան տէր, որում
միայն նախասահմանուած են Հնդկաս-

տանի գանձերն. այս յիրաւի ամենա-
գեղեցիկ մտաց զիւտ մ'է: Այլ այսպի-
սի մտածութեանց ամենէն չքնաղն կը
տեսնուի հինգերորդ երգին մէջ, յորում՝
Վասգոյ իւր նաւարկութեան միջոց
հանդիպած նորանշան դէպքերն կը
պատմէ Մելինդայ թագաւորին. որոյ
մէջ կը յաւելու ևս՝ թէ երբ իւր բանակն
Բարեյուսոյ զլուխն հասաւ, ուսկից բը-
նաւ նաւարկութիւն չէր եղած, մրկա-
յոյգ հողմոց և օրոտմանց միջոց՝ իւր
առջևը կ'ելլէ սոսկալի և միանգամայն
նորասբանչ տեսիլ մը ծովէն, որոյ
զլուխն զամպերը կը շոշափէր, և այս ա-
հաւոր կերպարանքս զարհուրեցոյց զի-
րենք: Այս էր Ողին, արչապանն այն
սպիկիանտին՝ որ անձանթօթ էր մինչև
այն ատեն: Որոտընդոստ ձայնով մը խօ-
սեցաւ իրենց հետ և սպառնացաւ՝ թէ
ինչպէս կը յանդըղին տիրապետել այն
ծովուն, որ երկար ժամանակէ 'ի վեր՝
խաղաղութեամբ ինքն կը ժառանգէր.
դարձեալ յայտնել և լրտեսել այն
թաքուն գաղտնիքը, զոր բնաւ մահկա-
նացու աչք մը ցարք չէ տեսեր: Էլ տը-
գիկեց անտնց՝ որ ալ առաջ չերթան, և
գուշակեց անտնց այն ամէն թշուառա-
թիւնքն որ պիտի կրէին, ու մեծ գաշ-
մամբ անբեռութեամբ: Այս ահա՝ իւր
բանաստեղծական յօրինուածոց ամե-
նագեղեցիկ մասերէն մին է, և բաւա-
կան է ցուցնել թէ Գամօէնա՝ թէպէտ
անկանոն, այլ սակայն եռանդուն և
վսեմ երևակայութեամբ քերթող է:

Անպատեհ կ'ըլլար՝ դիւցազններգակ
քերթողաց վրայ խօսած միջոց՝ բնաւ
յիշատակութիւն չընել Տեղեմուքայ
Արկածից սիրելի հեղինակին վրայ: Ո-
րոյ գրուածն թէպէտ և տաղաշաղիւ-
թիւն չէ, սակայն բանաստեղծութիւն
կոյուելու արդար գրոյմը յինքեան կը
կրէ: Չափակցեալ բանաստեղծական
արձակ գրութիւնն՝ որով գրուած է այս
քերթուածս՝ շատ ներգայնակ է, և
կ'ընծայէ Տեղեմուքայի ոճոյն այն աստիճա-
նի փափկութիւն՝ զոր գաղղիական լե-
զուն հազիւ երբեք կրնայ ունենալ չք-
փական բանաստեղծութեան մէջ:

Քերթուածոյս ծրագիրը ըստ մեծի մասին աղէկ պատկերացուցած է հեղինակն, որ թէ զիւցազնական վսեմութիւն կը բովանդակէ և թէ ենթակային ալ միութիւնը կը պահէ: Հեղինակն այնպիսի ամենայնոյ կերպով թափանցած է հին բանաստեղծից հոգւոյն և մտածմանցը մէջ, մանաւանդ հին դիցաբանութեան որ, ինքն աւելի յաջողած է զայն ընտիր և բարձր ցուցնել իւր քերթութեանց մէջ, քան թէ ուրիշ որ և իցէ արդի բանաստեղծ մը: Իւր նկարագրութիւնը ճոխ են և գեղեցիկ, մանաւանդ հաճոյական և քաղցր տեսարանաց մէջ, որոց ֆենեկնի հանճարն քան զայլս աւելի յարմար է. որ պիտիք են, հովուական կենաց արկածներն, առաքինութեանց լի քաղցրութիւնն, երկիր մը՝ որ ՚ի խաղաղութեան կը զարգանայ: Այս տեսակ զանազան նկարներն, զորս ինքն յօրինեց է, աննկագական քաղցրութիւն ու փափկութիւն կ'արգիւնաւորեն:

Այս քերթութեան ամենընտիր հատուածներն առաջին վեց գրքերն են, յորս Տելեմաք իւր արկածքը կ'ալիպսեայ կը պատմէ, որոնք ստուգիւ կենդանի և յօժարալուր պատմութիւնք են և իսկ յետագայ մասերը մանաւորապէս վերջի գրոց մէջ ձանձրանալի կ'ընէ հեղինակն. իսկ պատերազմական գործոց մէջ զորս կը նկարագրէ, խիստ անզօր կ'երևնայ: Գլխաւոր պատճառն՝ որովայս գրուածս զիւցազնեղական քերթութեանց մէջ չի դասուիր՝ քաղաքական ամենանուրբ տեսութիւնք են, զորս մէջ կը բերէ հեղինակն քանի մը տեղ, և Մենտորի խրատքն՝ որը յաճախ կը կրկնուին բարոյական ոճով: Թէպէտ ասոնք աւելի յարմար էին հեղինակին նպատակին, որ դեռուհաս իշխանի մը միտքն ու սիրտը կրթէն էր, սակայն զիւցազնական բանաստեղծութեան բընութեան պատշաճ չեն դատուիր, որոյ նպատակն է գեղեցիկ ցուցնել աւելի գործոց, յատկութեանց և զգացմանց ձեռքով, քան թէ զիւրիմաց և բացա. յայտ հրահանգք:

ՊՐԱՆ Բ.

Այլ և այլ դիւցազնեղական քերթոգք կը նկարագրեն ՚ի դժոխս իշնելը. և այն պատկերաց մէջ որովք ցուցին մեզ աներևոյթ աշխարհը, կը տեսնեմք աստիճանաբար յառաջադիմութիւն մարդկան ծանօթութեանց՝ վարձուց և պատժոց հանդերձեալ վիճակին նկատմամբ: Հոմերի Ոդիսականին մէջ՝ Ոդիսեայ ի շուտն մեզ անորիշ և խիստ մթին բան մի կ'երևցնէ: Տեսարանն՝ Ովիսանուծայրը ֆիմրաց երկրին մէջն է, որ միշտ միգով ու խաւարաւ ծածկեալ է: Երբ մեռելոց ուրուականքն կ'երևին, հազու կ'իմանամք թէ արդեօք Ոդիսեա երկրիս վրան թէ տակն է: Ոչ մի ուրուական՝ դիւցազնաց իսկ՝ երանեալ և մոխրաբաւ են իրենց ունեցած վիճակին վերայ՝ միւս աշխարհին մէջ. և երբ կը ջանայ Ոդիսեա մխիթարել զԱքիլէս, յիշեցնելով իրեն այն բարձր աստիճանն որ իրեն կը պատկանի այն աշխարհաց մէջ, յայտնապէս պատասխանէ Աքիլէսն՝ թէ ՚ի զուր է այն մխիթարութիւնն, և թէ աւելի հաճոյ է իրեն աշխատաւոր վարձուոր մ'ըլլալ երկրիս վրայ, քան թէ բովանդակ մեռելոց թագաւորել:

Ենէականի վեցերորդ գրքին մէջ այն պիսի նուրբ զաղափարներ կը դնուին, որք համապատասխան են մարդկանց իմաստասիրութեան մէջ ըրած յառաջադիմութեան: Նկարագրած առարկայք, որչափ պայծառ և որիշ են, այնչափ առաւել ևս մեծամեծ և փառաւոր են: Արդարոց և մեղաւորաց՝ զատուած կայանք, ոմանք ՚ի պատժի և այլք յերջանկութեան, խիստ գեղեցիկ են և ըստ ողջամիտ բարոյականի նկարագրուած: Բայց այն այցելութիւնն՝ զոր ֆենեկնի գրուածոյն մէջ կ'ընէ Տելեմաք ուրուականաց՝ աւելի իմաստասիրական է քան Վիրգիլիոսին: Դնքն ալ թէպէտ նոյն առասպելներն և նոյն զիցաբանութիւնը կը գործածէ, բայց ֆենեկն ճշմարիտ կրօնից ծանօթութեամբ աւելի զոտած ու մաքրած է հին դիցաբանութիւնը, և մեծ խնամով ճոխացուցած. և այս պատճառաւ է ահա՝ որով ֆենեկն այնքան երևելի եղաւ: Եւ ար.

դարոց երկանկութեան նկարագիրն գե-
րազանց է խորհրդական կարգին մէջ,
որ և լաւ կը բացատրէ մատենագրին
հանճարն և ոգին:

Վոյժէր իւր Հանրիադ գրուածոյն մէջ՝
դիւցազներգական քերթուած մի կ'ըն-
ծայէ մեզ, գաղղիական տաղաշափու-
թեամբ: Այս մեծանուն մատենագրիս
ամենայն գրուածոց մէջ պէտք է նկա-
տել մասնաւորապէս հանճարոյ ցոյ-
ցեր. և այս ալ հետեւաբար կը ցուցնէ
զանազան տեղեր՝ գաղափարաց սաս-
տիկ աշխոյժ և բացատրութեանց մէջ ե-
ռանգն և յանդուրժիւն. որոց համար
արժանապէս հռչակուած է: Ի վեր քան
զամենայն՝ մի քանի նմանութիւնք՝ որք
ընդ առաջ կ'եղլին մեզ՝ նորահնար և
խիստ ընտիր են: Սակայն ամբողջու-
թեանը մէջ զՀանրիադն իբրև նորա
գրուածոց գլուխ գործոյ չեմք կրնար
համարիլ. և յիրաւի ինքն աւելի թա-
տրերգութեանց մէջ յաջողեր է, քան
թէ դիւցազնական քերթութեանց մէջ:
Չաղղիական կանոնաւոր լեզուն անյար-
մար կը տեսնուի դիւցազներգութեան՝
բաց ՚ի միշտ կապկպած ըլլալէն, որով
ստիպուած է նմանայանք բառեր գոր-
ծածել, նոյն իսկ լեզուն՝ այս նիւթիս
մէջ բնաւ չի կրնար շքեղ և վսեմական
ոճ մ'առնուլ. և շատ աւելի յարմար կը
տեսնուի որբերգութեանց մէջ՝ գորովա-
շարժ և փափուկ կտորներ բացատրե-
լու, քան թէ դիւցազներգութեան մէջ
վսեմ երևիլ: Ուստի Հանրիադի գրու-
թեան ոճն անզոր կը նկատուի, և շատ
անգամ ալ ստորին արձակ գրութիւն
մի կը ձեանայ. արդ թէ այս և թէ ու-
րիշ պատճառաց նկատմամբ՝ քերթու-
թիւնն ստէպ ստոր կը մնայ՝ մեր երևա-
կայութիւնը վառելէ, և ոչ իսկ կը հրա-
հանգէ կամ կը վառէ զընթերցողն այն
եռանդուն աշխուժով՝ զոր ոգևորեալ և
վսեմ դիւցազներգակ բանաստեղծ մը
կը ներշնչէ:

Հանրիադի առարկայն է Հենրիկոս
Դին կատարած յաղթութիւնը ընդ-
դէմ Դաշնակցութեանն: Քերթութիւնն
զլիւսաւորաբար Բարիզու պաշարումը

միայն յինքեան կը պարունակէ, որ ըստ
ինքեան կատարեալ դիւցազներգական
գործ մ'է, անուանի և մտադրութեան
արժանաւոր, որ թէ յինքեան միու-
թիւնն ունի և թէ քննադատական կա-
նոնաց համաձայն է: Այսու հանդերձ՝
ենթարկուած է սա այն թերութեանց՝
զորս լուկանոսի ֆարսալեան գրուա-
ծին նկատմամբ յիշեցինք: Բովանդակ
քերթութեան նիւթ ընտրած է ընտա-
նի պատերազմ մը, յորում յառաջ կը
բերէ կոտորածներու և սպանութեանց
ատելի ու խորշիկ առարկաներ, որք
սաստիկ տխրութիւն կը սփռեն քե-
թութեան մէջ: Դարձեալ, ինչպէս լու-
կանոսի համար ըսինք, մեզ ժամանա-
կակից թուական կը կրէ ու արգի ծա-
նուցեալ ընդհանրական պատմութեան
հետ շատ մերձաւոր է: Բայց որպէս զի
այս թերութիւնը լեցնէ և լոկ պատ-
մութեան երևութէն դուրս հանէ զայն,
Վոյժէր ճշմարտութեան հետ խառ-
նեց առասպելայօղ պատմութիւններ:
Իւր քերթութիւնն կը սկսի Հենրիկոս Դ՝
ճանապարհորդութեամբ դէպ յԱնգ-
ղիա, և Եղիսաբեթ թագուհւոյն հետ
խօսակցութեամբ, թէպէտ և զիստէ
ամենայն ոք՝ թէ Հենրիկոս Դ. երբեք
Անգղիա զնացած չէ, և թէ այս երկու
հռչակուոր անձինք զիրար բնաւ չեն տե-
սեր: Այսպիսի աշխարհածանօթ և յայ-
տնի գործոյ մէջ նմանօրինակ կեղծիք
մը կը խորշեցնէ զընթերցողը, ան-
բնական և անպատեհ խառնուրդ մը
կը կազմէ՝ պատմական ճշմարտութեան
հետ: Միջաբանութիւնն տեղի ունեցաւ
անոր գրուածոյն մէջ, որպէս զի Հենրի-
կոս պատմէ քաղաքական պատերազմին
նախնի գործերը, նման այն պատմու-
թեան՝ զոր կ'ընէ Ենէաս Դիդոնի առ-
ջև. բայց այս նմանութեան մէջ չյա-
ջողեցաւ. վասն զի Ենէաս իրաւացի կեր-
պով կրնար պատմել Դիդոնի այնպիսի
արկածներ՝ որոց կամ բոլորովին ան-
տեղեակ էր նա և կամ անկատար ծա-
նօթութիւն մը միայն ունէր անցողա-
կան համբաւներով. բայց Եղիսաբեթ
թագուհին չի կարծուիր թէ բոլորովին

անտեղեակ ըլլար այն ամէն դիպաց՝
զորս քերթողն Հենրիկոսի պատմել կու
տայ :

Վլոյթէր իւր առարկայն զեռ աւելի
գեղեցկացընելու նպատակաւ՝ ուղեր է
յորինուածներ եւ գործածել այլ աստ
եւ կը ստիպուիմ մեղադրել իւր ձեռն-
արկը, վասն զի այն կազմածն՝ զոր ինքը
կը գործածէ՝ ամենանուաստ է, ու զիւ-
ցազներգական բանաստեղծի մը ան-
պատշաճ, ինչպիսի են մտացածին էակ-
ներն : Անմիաբանութիւնն, Նենգութիւ-
նըն է Սէր կը նկատուին անդ իբրև ի-
րականութիւն և մարդկային գործն ան
ձիքը, որը բանահիւսութեան մէջ նշա-
նաւոր դեր մը կը ձևացընեն : Բայց
այս խոհական դատողութեան բովան-
դակ կանոնաց հակառակ է. վասն զի Ռ-
գիք, Հրեշտակը և Դեք՝ գոյաւոր էակք
ճանչցուած են. իսկ այլարանական էակ-
ներն զիտէ ամենայն դը թէ մարդկային
կրից և յօժարութեանց ստակ պատկեր-
ներ են : Կարելի է այսպիսեաց եւ խօսք
ընծայել, որպիսի միւս անձնաւորու-
թիւնք և երևոյթք են. կարելի է դար-
ձեալ բովանդակ այլարանական քեր-
թութեան մը մէջ առաջին տեղին ունե-
նան, և այն ատեն իրենց բնական և յա-
տուկ սահմանին մէջ են. իսկ այնպիսի
քերթութեան մը մէջ, որ բովանդակ
մարդկային գործոց վրոյ կը ճառէ, երբ
այդ տեսակ էակներն՝ մարդկանց գոր-
ծակից նկատուին, մարդուս երևակայու-
թիւնն խառն 'ի խուռն ըմբռմամբ իրա-
կանութեան և ցնորից մէջ զրուելով՝ եր-
բեք իւր հանգիստը չի դաներ :

Սակայն արդար գտնուելով առ մա-
տենադիրն, պարտական եմ 'ի նկատի
նա անուղ յ՞ : Լուզովիկոսի մուտքը որ
ստուգիւ ամենայլաւ վսեմ կազմած է :
Հանրիադի ամենալաւ հատուածն, մա-
նաւանդ թէ նաև ուրիշ քերթութեանց
մէջ գտնուած շատ գերազանց հա-
տուածներէն մին՝ աներևոյթ աշխարհին
տեսիլքն է, զոր Ս. Լուզովիկոս Հենրի-
կոսի կը ներկայացընէ յերազի, եօթնե-
րորդ դրուագին մէջ : Մահն՝ որ յաջոր-
դաբար մեռելոց հոգիքը Աստուծոյ

առջև կը տանի, այն զարհուրուծն՝ զոր
կրզգանն՝ երբ զանազան աշխարհներէ և
կրօնական ազանդներէ կ'եննեն Աստու-
ծոյ ներկայութեան առջև, և կ'իմանան
թէ իրենց աւելորդապաշտութիւնքն մու-
լարք էին, և յայտնի կը տեսնեն ճշմար-
տութիւնը. բարդին կայանն՝ որ բա-
ցուելով Հենրիկոսի առջև, և իւր յա-
ջորդաց շարքը որ կը տեսնուի իրեն,
սքանչելի և վսեմ առարկաներ են, ու
բովք ստուգիւ Վլոյթէրի հանճարն գե-
րազանց համբաւեցաւ :

Թէպէտ և քերթութեանս միջարա-
նութեանց մի քանին պատշաճապէս ընդ-
լայնուած են, սակայն ամբողջութեա-
նը մէջ պատմութիւնն շատ ընդհանուր
է. պարագայք խիստ խոկած ու հար-
կանցի ծանօթութեամբ, յիշատակուած
են : Անտարակոյս ահա այս պատճառաւ
է որ քերթութիւնն զօրաւոր տպաւո-
րութիւն չ'ընեն : Զգացմանց կորովն՝ որ
անդ կը տիրէ, վսեմ և ազնուական
է : Կրօնքն ամէն դիպաց մէջ հրաշայլ և
փառաւոր կ'ընծայի. և իւր ամէն գրուա-
ծոց մէջ ընդհանրապէս կը տիրէ մար-
դասիրութեան եւ ներողամտութեան
ոգին :

Միլտոն՝ որոյ վրոյ պիտի խօսիմք,
բովանդակ նոր և անսովոր ճամբայ մը
բռնեն է. մինչ զի իւր քերթութեան
սկիզբէն՝ աներևոյթ աշխարհի մը մէջ
զմեզ մտուցած իր տեսնեմք, երկնային
ու գոժիսային էակներէ պաշարուած :
Հրեշտակք և Դեք՝ հորոշաւ Դրախ-
տին մէջ կազմածք չեն ձևացընեն, ոյլ
զխաւոր գործողք են, և այն որ սքան-
չելին է ուրիշ քերթութեանց մէջ, աստ
մի միայն դիպաց բնական ընթացքն է :
Այսպէս աշխարհի իրողութիւններն ու
տար առարկայ մը տարակոյս կու տայ,
որոց կարևոր կը թուի այս քննադատու-
թիւնս ընել, թէ արդեօք կորոշաւ Դր-
ախտիսին՝ կարելի է զիւցազնական բա-
նաստեղծութեանց թուոյն մէջ դասել :
Բայց ինչ և իցէ անուամբ ալ կոչուի
սա, ստուգիւ քերթութեան հանճարոյն
ամենաբարձր մտածմանց մին է. և դիւ-
ցազներգութեանց մեծամեծ դրոշմնե,

րէն մէկուն մէջ՝ այսինքն՝ վսեմութեան և գերազանցութեան՝ ըստ ամենայնի հաւասար է այլոց՝ որք զիւցազնական քերթութեան անունը կը կրեն:

Իսկ թէ որքան յարողեր է արդեօք մաւտենագիրն իւր նիւթոյն ընտրութեան նկատմամբ, կրնամք թերևս խնդրոյ տակ ձգել: Եւ ստուգիւ, զժուարակոխ և անընտել ճամբայ մը բռնած է: Եթէ աւելի մարդկային քան թէ աստուածաբանական նիւթ մ'ընտրած ըլլար, որ և կենաց պատահարաց հետ յարակցութիւն մ'ունենար, որով ընդարձակ միջոց կ'ունենար մարդկային բարուց կրթեան ու բնաւորութիւնքը բարատրելուայն ժամանակ իւր քերթութիւնը գուցէ ընթերցողաց մեծ մասին աւելի հաճոյ ընծայուէր: Իւր ընտրած նիւթն՝ իւր վսեմ և սուր հանճարոյն յարմար էր. ինքն միայն կարող էր զայն յօրինելու, յորում ստուգիւ երևակայութեան և նորանոր գիւտից յքանչելի կորով կը ցուցընէ: Եւ այս ինչ է զարմանալին՝ թէ ինչպէս Ս. Գրոց այն սակաւատող խօսքերէն կըրցեր է այնպիսի ընդարձակ և կանոնաւոր պատմութիւն մի յօրինել, և զարդարել իւր քերթուածը այնչափ զի պաց զանազանութեամբ: Մերթ ընդ մերթ առաջ կ'իջնէն ցամաք և խիստ պարբերութիւնք. մտանազիրն մի քանի զիպաց մէջ աւելի իմաստասէր կամ աստուածաբան, քան թէ բանաստեղծ կ'երևի. բայց իւր գրուածոյն բովանդակութիւնն գովասանաց արժանի է: Կը բարձրացընէ մեր երևակայութիւնը, կը վերացընէ և ՚ի գութ կը շարժէ զմեզ՝ որչափ որ յառաջ երթամք, և այս միշտ անվրէպ և ապահով փորձ է՝ զիւցազնական քերթուածոյ մը արժանաւորութեան: Աւարկայից ճարտար փոփոխութիւնն՝ որով տեսարանն մերթ յերկրի, մերթ ՚ի դժոխս և մերթ յերկինս է, բաւական զանազանութիւն կու տայ նիւթոյն: Մինչդեռ գրուածոյն միութիւնն միշտ կատարեալ կերպով պահուած է: Աղամայ ու Եւայի Դրախտին մէջ ունեցած զբաղումներն կենդանի և խաղաղ տեսարաններ կը ներկայանան մեզ: Կան

և աղմկալից տեսարաններ ու մեծամեծ գործեր, սատանային ձեռնարկներուն և Հրեշտակաց կռուոյն մէջ: Մեր նախահարց անմեղութիւնը, պարզութիւնը և սիրելութիւնը հակառակ դնելով Սատանային գոռոզութեան և ամբարհաւաճութեան, շատ ընտիր ընդդիմակայութիւններ կը ներկայացընէ, որք կը տիրեն բոլոր քերթուածոյն մէջ. միայն թէ գրուածոյն վերջաբանութիւնն, ինչպէս նշմարեցի՝ շատ ողբերգական է և անյարմար զիւցազններգութեան:

Նիւթոյն բնութիւնն ըստ ինքեան բարուց յատուկ նկարագրութիւն չէր պահանջեր. և անոնք որ կարելի էր նկարագրել, ամենայն խնամօք ՚ի գործ են գրուեր: Սատանան յաճախ դուրս կը ցատքէ, և ամբողջ քերթութեան մէջ ամենէն աւելի նորա բարքն պայծառ կը նկարագրէ: Միլտոն դժոխային ոգին մեր մտաց ըմբռնման համեմատ չի նըկարագրեր, այլ ըստ պահանջման իւր նիւթոյն՝ կ'ընծայէ նմա մարդկային բնութիւն եւ մի քանի ևս բարի յատկութիւնք. քաջասիրտ է, ևս և հաւատարիմ իւր հետեւողաց. իւր ամբարիշտ վիճակին մէջ խղճի խայթ կը կրէ, միշտ ՚ի գութ կը չարժի մեր նախահարց համար, և իւր չար գիտումն անոնց զէմ արդար կը համարի՝ իւր վիճակին հանդամանքներէն բռնադատեալ, և աւելի բարկութեան և փառասիրութեան պատճառաւ կ'ընէ իւր գործերը՝ քան պարզ չարութեամբ: Միով բանիւ Միլտոնի նկարագրած Սատանն չարադոյն չէ քան շատ մը զաւակցութեանց և ապստամբութեանց գլուխներ, զորս կը նկատենք պատմութեան մէջ: Բէհեզգլեբուդի, Մոլոքոյ ու Բելիարայ ընծալուած զանազան բնաւորութիւնքն ամենազեղեցիկ ոճով ճառուած են՝ երկրորդ զոց պերճաբան խօսքերով: Բարի հրեշտակք թէպէտ և միշտ յարգանք եւ ըստ արժանւոյն նկարագրեալք, բայց միաձևութիւն ունին իրենց երևութիւն մէջ. թէ և ասոնց մէջ Ռաֆայել քաղցր ներողամտութիւնն ու Աբրիելի փորձ հաւատարմութիւնն՝ պատ

չաճ որոշողութեամբ կը զանազանին իրարմէ: ԶԱստուած իսկ նկարագրելն և պատմել Հօր ընդ Որդւոյ եղած խօսակցութիւնքն՝ շատ դժուարին և յանդուգն էր. և այս պատճառաւ է՝ որ քերթողն, ինչպէս յայտնի է, յաջողած չէ: Մարգկային բնութեան բարոյց նկատւամբ՝ մեր նախածնողաց բանեղութիւնը և առ միմեանս ունեցած սէրը, վայելարար ու ամենափափուկ եղանակաւ նկարուած են: Ադամ իւր առ Ռափայէլ և առ Էւա ըրած այլ և այլ խօսակցութեանց ոմանց մէջ՝ թերևս չափէ դուրս ուսեալ և հմուտ կ'երևի: Աւելի պայծառ կերպով նկարագրուած է Էւայի ունեցած բարքն, իւր քաղցրութիւնըն, պարկեշտութիւնն ու փափկութիւնըն՝ լաւ կը ցուցընեն իւր կանացի բընութիւնը:

Միլտոնի մեծ ու որոշիչ գերազանցութիւնն՝ իւր վսեմութիւնն է: Այսու նկատմամբ կ'առաւելու թերևս քան զՀամեր, ինչպէս նաև անտարակոյս քան զՎիրգիլ և միւս ամէն բանաստեղծները կը գերազանցէ: Առաջին և երկրորդ զբըքերն բովանդակ գրեթէ հաստատուն օրինակ մ'են ամենաբարձր վսեմի: Գոթիքին նկարագիրն ու դոճխային զօրաց անկումն, Սատանային խրոխտ կերպարանքն, գոթխային իշխանաց ատենըն, սատանային՝ անդրնդիւն մէջէն մինչև աշխարհիս սահմաններ թռչիւն, իրենց մէջ ամենընդարձակ ու ամենաբարձր գաղափարներ կը պարունակեն, զորս երբեք ուրիշ քերթող մը երեւակայած չէ: Վեցերորդ գրքին մէջ ևս կան վսեմ նկարագրական իրեր, 'ի մասնաւորի Մեսիային երևանալն. թէպէտ և այս գրքիս մի քանի հատուածներն քննադատութեան ենթակայ են, 'ի մասնաւորի գիւտաց իմաստայից ծաղրածութիւնքն՝ իրենց ապարդիւն հրազինուց վրայ: Միլտոնի վսեմութիւնն տարբեր է Հոմերէն. վերջնոյս մէջ ընդհանրապէս եռանդնայից և բուռն կորով կայ, իսկ առաջնոյն մէջ աւելի խաղաղ և վեհափառ քերթութիւն կը տրբէ: Հոմեր կը վայրանայ կը բորբոքի, իսկ Միլտոն

'ի հիացման և 'ի բարձրութեան կը հաստատէ զմեզ: Հոմերի վսեմութիւնն գլխաւորապէս իրաց նկարագրութեան մէջ կը տեսնուի, իսկ Միլտոնին մեծամեծ և հիանալի առարկաներ նկարագրելու ժամանակ կը փայլի:

Թէպէտ Միլտոն եղական է մասնաւորապէս իւր վսեմութեան նկատմամբ, սակայն իւր քերթութեան զանազան մասերուն մէջ կը գտնուին նաև խիստ շատ զեղեցիկ, փափուկ ու հաճելի հաստուածներ: Երբ Գրախոսին վրայ կը խօսի՝ տեսարաններն աւելի զուարթագին ու ծիծաղաշարժ են: Իւր նկարագրութեանց մէջ կարգէ դուրս մտաց բեղնաւորութիւն կը փայլի, իսկ նմանութեանց մէջ առաւել քան զառաւել ճարտար կը տեսնուի. և այս կերպ նկարագրութեամբ մեզ կը ներկայացընէ ընդհանրապէս ամենաբարձր և քանզամէնն աւելի զեղեցիկ իրաց պատկերներ. իսկ թէ արատ համարինք, ստէպ ստէպ ակնարկութիւն կ'ընէ գիտնական իրաց ու հնութեան առասպելաց: Կորուստ Գրախոսին վերջին մասին մէջ, պէտք է խոստովանիլ ստուգիւ թէ խիստ նուագիւր է: Մեր նախածնողաց անկմամբն՝ թուի թէ Միլտոնի հանճարն ևս կը խոնարհի. սակայն վերջաբանին մէջ կը գտնուին ողբերգական զանազան գեղեցիկութիւնք. յանցաւոր լծակցաց խղճին խայթն, և սոցա կատարեալ զղլումն, իրենց թաքուստն, որոյ պատճառաւ ստիպուած էին թողուլ զԳրախոսը, վերջին դրուագն՝ յորում հրեշտակն կը ծանուցանէ Ադամայ՝ իրենց ապագայ կենաց ճակատագիրը, ամենաճարտար նկարագրուած է. բայց գործադրութիւնն շատ տեղ անզօր է:

Միլտոնի լեզուն ու տաղաչափութիւնըն ամենամեծ յարգ ունի: Գրութեան ոճն վսեմութեամբ լի է, և սքանչելի կերպով իւր առարկային յարմարեցուցած: Իրեն ազատ տաղաչափութիւնն ներդաշնակ ու փոփոխական է, և կ'ընծայէ օրինակ չափուց և թուոց զանազանութեան: Որքան կարող է ունել անգղիական լեզուն: Գաղղիական լեզուին

տաղաչափութեան չի նմանիր, որ կապակցեալ է կանոնաւոր և անընդհատ մեղեցիով, որ շուտով ականջ կը յօդնեցնէ. այլ սա մերթ քաղցր է, խաղաւն և նրբաձայն, մերթ զօրաւոր և խիստ. կը փոփոխէ իւր վերջաւորութիւնը ու խառն է տարածայնութեամբ, ինչպէս և գիւցազնական քերթութեան ոճոյն ազատութեան պատշաճ է: Երբեմն թէ և ընդ առաջ կ'իլլեն անհարթ ու արձակ տողեր, բայց այսպիսի երկայն գրութեան, ու միանգամայն ամբողջութեամբ ներդաշնակեալ գործոյ մէջ ներելի են:

Վերջապէս կորուստ Դրախտին քերթուած մ'է՛ յորում առատօրէն ամէն տեսակ գեղեցկութիւնք կը գտնուին, և այնու ստուգիւ կրնայ պարծիլ Հեղինա կըն թէ բնաւ ուրիշ որ և իցէ քերթողէ

ստորև չի մնար իւր համբաւով: Թէպէտ կը խոստովանիմք թէ շատ մ'անհարթութիւններ ալ ունի, այլ այս գրեթէ բոլոր գերազոյնու անուանի հանճարնե, ռու ճակատագիր մ'է, որ երբեք բոլորովին գերծ չեն որ և իցէ վրիպակէ: Միւտոն շատ անգամ աստուածաբան և բընազանց է. երբեմն խիստ լեզու կը գործածէ, շատ հեղ ալ արուեստակեալ է իւր խօսից մէջ, և փափաքող՝ իւր գիտութեամբ պարծենալու. բայց այս թեւութեանց շատն՝ իւր դարուն իմաստակական նրբութեանց պէտք են ընծայուիլ: Սա կորով կը ցուցնէ հանճարոյ ու մտաց ձկտում մը, որ գերազանց է իւր ուրիշ ունեցած ամէն կատարելութիւններէն. մերթ կը գերազանցէ քան զի և է քերթող, և մերթ ինքն իրմէ իսկ ստոր կը մնայ:

Պ Լ Է Ռ

ՂԱՌԱՌՈՒԽ ԼԵՍԱՌ

(Իւրօր գեղագիտակ մերձ 'ի Տրապիզոն քաղաք)

Ի Թիրգիքէ կամ Գոցէ
 Ի չոր կառուտ կրտասանէ,
 Թըւոյնմ 'ի ծայրին Ղառուխ
 Բոլոր բըլրոց վեհ գըլուխ:
 Ա՛յ, որոց սիրաց ջերմ զարնն
 Արբեն չըքնաղն և վրսեմ,
 Ելնեն հետոցս ետեւէն
 Թող զան զըննել 'ի գիտէն:
 Հալ գիտեցէք ըզՊոնտոս,
 Շինուածք բնութեան սրբարախ,
 Լերինք հովիտք դարուփոս,
 Գետակք և ծով ամեհի:
 Յայս մէկ երկրիս՝ կէտ փոքրիկ,
 Գեղով բնութեան աննրման,
 Աստուած ժողվեց միաբան
 Ինչ որ արար գեղեցիկ:
 Մաղիկք և ծառք բիր պէսպէս,
 Տանձ և խընձոր վարդերես,
 Ծիփին, կոմար դունազեղ
 Չաօ ու հաւեր շատ չըքեղ:
 Այդ ամենուն տուն և յարկ
 Պոնտոս չըքնաղն էր վիճակ:

Հըսկող սուր աչք և գիտակ՝
 Ղառուխ դուն ես, վեհ բըլրակ:
 Չիւնտոս սարից ձիւնարան
 Միպտակ և սև ալէխառն,
 Հըսկայ լերինք ցԱրծաթտուն՝
 Կարճ հասակէդ են նրկուն:
 Մոջն 'ի յստիցը ըստորև
 Լուռ մըտընչէ տայ բարև,
 Ի Քէմէրէ ցըլիօռող
 Քեզնէ վախեն՝ է քարող:
 Գետք և առուակք սարսափեն
 Քո կողերուդ չըմտանն:
 Ղառուխ, դու չես, չես աղբիւր,
 Այլ ճըրաօք ես յուսաստիւռ:
 Այդ քո չէնքն, այդ քարեր,
 Խոր կամարներդ և խորեր,
 Ա՛ր ատենէն պլտակեն,
 Ղառուխ՝ զըլուխդ ամպեղէն:
 Եկեղեցիք թէ մեհեան
 Բազին արդեաք թէ սեղան,
 Եթա քո ճակատորդ ծածկեց
 Զոր ժամանակ խանգարեց: